VEOLIA
Ջուր

«09» օգոստոս 2024թ.
N ՎՀ/31610

ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողովի նախագահ՝
պրն. Գ.Բաղրամյանին

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն Բաղրամյան

Համաձայն ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016թ–ի դեկտեմբերի 9-ի <<<<Վեոլիա Ջուր>> փակ բաժնետիրական ընկերությանը խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիա տրամադրելու մասին>> № 397Ա որոշմամբ հաստատված Լիցենզիայի պայմանների № 3 հավելվածի, հաշվարկվել են <<Վեոլիա Ջուր>> փակ բաժնետիրական ընկերության կողմից սպասարկվող տարածքների խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայության մատուցման սակագները:

Կից ներկայացված հաշվարկի արդյունքում, խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) մանրածախ ծառայությունների մատուցման սակագների գումարային մեծությունը կազմում է 205.024 դրամ/խմ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը, որը համահունչ է 2024թ. գործող սակագնին:

Ելնելով վերոգրյալից առաջարկում ենք, 2025թ. համար, <<Վեոլիա Ջուր>> փակ բաժնետիրական ընկերության կողմից սպասարկվող տարածքում խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման գումարային սակագները թողնել անփոփոխ՝ պահպանելով 2024թ. գործող գումարային սակագները, մասնավորապես՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի նոյեմբերի 3-ի №1122-Ն որոշման համաձայն սոցիալապես անապահով ընտանիք համարվող սպառողներին (բաժանորդներին) խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) մատակարարված ծառայության մատուցման գումարային սակագինը՝ 180.0 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը՝ մատակարարված յուրաքանչյուր 1 խ.մ. դիմաց, և 150.0 դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի, որից՝

ա. խմելու ջրի մատակարարման ծառայության մատուցման սակագինը՝ 127.5 դրամ՝ մատակարարված յուրաքանչյուր խորանարդ մետր խմելու ջրի դիմաց՝ առանց ավելացված արժեքի հարկի, և 153.0 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

ՀՀ ԵՐԵՎԱՆ «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ
ԵԼԻՑ 31610
«09» 08 2024թ.

ՀՀ, ք. Երևան,375025,Աբովյան 66ա
Հեռ.՝ 1-85, 0-800-00-185, 011-300-185
Էլ. փոստ՝ am.water.office.all@veolia.com
Վեբ-էջ՝ www.veolia.am

ՀՀ, ք. Երևան,375025,Աբովյան 66ա
Հեռ.՝ 1-85, 0-800-00-185, 011-300-185
Էլ. փոստ՝ am.water.office.all@veolia.com
Վեբ-էջ՝ www.veolia.am

բ. ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայության մատուցման սակագինը՝ 22.5 դրամ՝ հեռացված յուրաքանչյուր խորանարդ մետր ջրի դիմաց՝ առանց ավելացված արժեքի հարկի, և 27.0 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը :

2) Սույն կետի 1-ին ենթակետում չնշված մյուս բաժանորդներին ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայության մատուցման գումարային սակագինը՝ 205.992 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը՝ մատակարարված յուրաքանչյուր 1 խ.մ. դիմաց, և 171.660 դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի, որից՝

ա. խմելու ջրի մատակարարման ծառայության մատուցման սակագինը՝ 145.911 դրամ՝ մատակարարված յուրաքանչյուր խորանարդ մետր խմելու ջրի դիմաց, առանց ավելացված արժեքի հարկի, և 175.093 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

բ. ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայության մատուցման սակագինը՝ 25.749 դրամ՝ հեռացված յուրաքանչյուր խորանարդ մետր ջրի դիմաց՝ առանց ավելացված արժեքի հարկի, և 30.899 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը :

3) Ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող այլ անձանց, ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող համայնքներին, համայնքային բյուջետային հիմնարկներին և ոչ առևտրային կազմակերպություններին՝

ա) խմելու ջրի մատակարարման մեծածախ ծառայության մատուցման սակագինը՝ 34.170 դրամ՝ յուրաքանչյուր խորանարդ մետր մատակարարված խմելու ջրի դիմաց՝ առանց ավելացված արժեքի հարկի, և 41.004 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

բ) ջրահեռացման մեծածախ ծառայության մատուցման սակագինը՝ 17.085 դրամ՝ յուրաքանչյուր խորանարդ մետր հեռացված ջրի դիմաց՝ առանց ավելացված արժեքի հարկի և 20.502 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը :

4. <<Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն>> փակ բաժնետիրական ընկերության ստորգետնյա ջրերի հեռացման ծառայության մատուցման սակագինը՝ 10.797 դրամ՝ յուրաքանչյուր խորանարդ մետր հեռացված ջրի դիմաց՝ առանց ավելացված արժեքի հարկի, և 12.956 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

Միաժամանակ խնդրում ենք հաշվի առնել, որ ներկայացված սակագնի ճշգրտման հաշվարկի հիմնավորող տեղեկատվություններում հուլիս ամսվա տվյալները սպասողական են:

Դիմումին կցվում են՝

1. <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) մատուցվող ծառայությունների սակագների հաշվարկը (2 էջ, 2 օրինակ):

2. <<Իրավունք>>, <<Առավոտ>> օրաթերթերի էլեկտրոնային կայքերում հրապարակված հայտարարությունները (կցված են 2-ական օրինակներից) : Միաժամանակ տեղեկացնում ենք, որ հայտարարությունը տեղադրված է նաև Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (www. azdarar.am) :

3. 2023թ. օգոստոս - 2024թ. հուլիս ամիսներն (հուլիս ամսվա տվյալները սպասողական են) ընկած ժամանակահատվածում մատակարարված ջրաքանակի ծավալների վերաբերյալ տեղեկատվություն (1 էջ, 2 օրինակ):

4. Ազգային վիճակագրական ծառայության կողմից ինտերնետային էջում ներկայացված սղաճի ցուցանիշը՝ հունվար-հուլիս (1էջ, 2 օրինակ) :

5. Էլեկտրաէներգիայի գծով 2023թ. օգոստոս - 2024թ. հուլիս ամիսների (հուլիս ամսվա տվյալը սպասողական է) տվյալների հիման վրա հաշվարկված միջին սակագնի մեծությունը (1էջ՝ 2 օրինակ) :

ՀՀ, ք. Երևան, Աբովյան 66
Հեռախոս՝ **011 30-01-85**
Էլեկտրոնային փոստ՝ am.water.office.all@veolia.com
ՀՎՀՀ՝ 02655115, Պետ.ռեգիստրի գրանցման թիվ՝ 273.120.934743, 16.11.2016թ. վկայական՝ № 03Ա1084743
Հ/Հ Հայբիզնեսբանկ ՓԲԸ՝ 11500351562015

<<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ
Գլխավոր տնօրեն՝ Մարիաննա Շահինյան

09 օգոստոս, 2024թ.

VEOLIA
Ջուր

«12» օգոստոսի 2024թ.

№ ՄՇ/32049

ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողովի նախագահ՝ պրն. Գ.Բաղրամյանին

Հարգելի պարոն Բաղրամյան

Ի լրումն <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի կողմից ս.թ. օգոստոսի 9-ի №ՄՇ/31610 գրությամբ ներկայացված ընկերության կողմից սպասարկվող տարածքների խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայության մատուցման սակագների ճշգրտման դիմումի հայտնում ենք, որ 2025 թվականի սակագները գործող սակագների մակարդակին պահպանելու դեպքում ընկերությունը պարտավորվում է հաշվարկներում ներառված բազիսային մանրածախ սակագնի ավելացմանը համապատասխան ձևավորվող լրացուցիչ ազատ գումարների հաշվին, ի լրումն պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրի իրականացնել խիստ անհրաժեշտ հավելյալ կապիտալ աշխատանքներ:

Հարգանքով՝ Գլխավոր տնօրեն
Մ. Շահինյան

ՀՀ ԵՐԵՎԱՆ «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ
ԵԼԻՏ 32049
«12» 08 2024թ.

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Աբովյան 66ա
Հեռ.՝ 1-85, 0-800-00-185, 011-300-184
Էլ.փոստ՝ am.water.office.all@veolia.com
Կայք՝ www.veolia.am

Address: RA, Yerevan, 0025, str. Abovyan 66a build.
Tel.: 1-85, 0-800-00-185, 011-300-184
E-mail: am.water.office.all@veolia.com
Website: www.veolia.am